

Սամսոն Քառյան

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Քանալի բառեր - Ֆրանսիա, գաղթավայր, երիտասարդություն, բնավորություն, մշակույթ, տնտեսություն, մտավորականություն, ջարդեր, կոտորածներ, երախտիք, հայկական հարց և այլն:

Ֆրանսիան աշխարհագրորեն Հայաստանից զգալիորեն հեռու է, մեր երկրները միմյանց կապող ոչինչ չունեն, սակայն սա չի խանգարել, որ դեռ շատ վաղ անցյալից սկսած՝ Ֆրանսիայի և հայ ժողովրդի միջև լինի հոգևոր ամուր կապ:

Հայ-ֆրանսիական հարաբերություններին անդրադարձել են բազում հեղինակներ, գրի առել առանձին դրվագներ, նկարագրելով հայ ժողովրդի՝ Ֆրանսիայում բնակվող հատվածի դեգերումներն ու հյուրընկալ Ֆրանսիայի հողում նոր կյանք սկսելը, տեղում արմատավորվելը:

Հայ ժողովրդի այդ փոքրիկ մասը սկզբնական շրջանում միայն մեկ խնդիր ուներ՝ ապահովել սեփական կյանքի անվտանգությունն ու իր սերնդի ապագան: Եվ հայր իր նվիրումի, ազնվության, աշխատասիրության շնորհիվ գրավեց Ֆրանսիայի ականավոր անձանց ուշադրությունն ու հոգածությունը, և շատ ազնիվ հոգիներ գնահատելով՝ ամեն ինչ անում էին հայի կյանքի ու գործունեության համար:

Ֆրանսահայ գաղթավայրի պատմությանն անդրադարձել է մեծավաստակ պատմաբան Ա. Աբրահամյանը իր «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» (հ. 1, Երևան, 1964 թ., հ. 2, Երևան, 1967 թ.): Հեղինակը հիմնականում կանգ է առել աշխարհում գործող գրեթե բոլոր գաղթավայրերի պատմությանը և տվել դրանց համառոտ պատմությունը: Ա. Աբրահամյանն իր հեղինակած ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հատորներում համառոտ գրել է Ֆրանսիայում առաջին բնակություն հաստատող հայերի և հետագայում Ֆրանսիայում մեծ ճանաչման հասած հայազգի անձանց մասին: Հեղինակը նկարագրում է, թե ինչպես Մեծ եղեռնից մազապուրծ փրկված հայության առանձին անհատների սերունդները կարողացան Ֆրանսիայում հասնել մշակութային, կրթական, գիտական և պետական բարձունքների:

Հայ-ֆրանսիական հարաբերություններին անդրադարձել է նաև մեծանուն հայազետ, լեզվաբան ակադեմիկոս Հ. Աճառյանն իր «Հայոց պատմություն հյուսված ընդհանուր պատմության հետ» (2004 թ.) աշխատությանը, որտեղ առանձին դրվագներ նվիրված են ֆրանսահայ գաղթավայրին, և անդրադարձ է կատարվել հայերի՝ Ֆրանսիայի պետության, մշակույթի, գիտության մեջ ներդրումներին: Աշխատանքը գրված է պարզ, հանրամատչելի լեզվով և կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել ընթերցող լայն շրջանների համար:

Ընթերցողներին մեծ հետաքրքրություն կպատճառի նաև մեր օրերի անվանի պետական և մշակութային գործիչ Ս. Պողոսյանի «Հարևաններ՝ մոտ և հեռու» չորս հատորով աշխատությունը (Երևան, 2012 թ.): Պողոսյանը ևս իր առջև խնդիր չի դրել հետազոտել և շարադրել հայ-ֆրանսիական հարաբերություններն ընդհանրապես: Նշված քառահատորում Ֆրանսիային ևս տեղ է տրված, և այն շատ արժեքավոր է, սակայն նա ևս հայ-ֆրանսիական հարաբերություններին անդրադարձել է այնքանով, որքանով թույլ է տվել աշխատության նպատակն ու ծավալը:

Հայ-ֆրանսիական հարաբերություններին սկզբունքային գնահատական է տվել Լ. Բարսեղյանը. «Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը ճանաչած առաջին պետությունն է աշխարհում» (Երևան, 2002 թ.) աշխատության մեջ, ուր հեղինակը առաջին անգամ հայերեն ընթերցողի սեղանին է դրել Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի և Սենատի քննարկումների արձանագրությունները Հայոց ցեղասպանության մասին:

Լ. Բարսեղյանը սիրով է ներկայացնում Ֆրանսիայի առաջադեմ հասարակության ներկայացուցիչների ջանքերը հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության ուղղությամբ: Նրանք իրենց բողոքի ձայնն են բարձրացրել արևմտահայության դեմ կիրառված անլուր հալածանքների ու բռնությունների դեմ:

Մանրամասն ներկայացված է Սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի կառավարման տարիներին իրականացված հայերի զանգվածային ջարդերն ու 1915 թ. Մեծ եղեռնը, ցույց է տրված Ֆրանսիայի ժողովրդի կողմից թուրքական բռնակալների նկատմամբ զայրույթն ու դատապարտումը:

Գիտական մեծ ջանասիրությամբ է գրված Ռ. Սահակյանի «Ցեղասպանության պատմությունից. Եղեռնի դատապարտման հարցը և ֆրանսիական հասարակությունը» (Երևան, 1990 թ.) աշխատությունը:

Նույն ջանասիրությամբ է գրված նաև Ե. Գասպարյանի «Ֆրանսիան և Մեծ Եղեռնը» (Երևան, 2000 թ.) բարձրարժեք աշխատությունը: Հայ-ֆրանսիական հարաբերություններին անդրադարձել են նաև Հ. Արմենը, Լեոն, Ավ. Իսահակյանը, Ա. Հարությունյանը, Ջ. Կիրակոսյանը, Ս. Դրամփյանը, Է. Մինասյանը և բազում այլ հեղինակներ: Այս ամենով հանդերձ՝ հայ-ֆրանսիական հարաբերությունների ընդգրկուն հետազոտություն չկա, և այն շատ անհրաժեշտ է հետագա սերունդներին ճշմարտությունը տեղ հասցնելու, և հայ ժողովրդի պատմությունն ամբողջական ներկայացնելու համար:

Ֆրանսիայի օրինակը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ մենք ճանաչելի ենք դարձել, ներկայացրել ենք մեր մշակույթն ու հայի հոգին, մեր դրականին ու առավելություններին օտարները մոտիկից առնչվել են, մեզ ընդունել, տեղ տվել, զարգացման հնարավորություններ ընձեռել, այդտեղ հասել ենք դրական արդյունքի, իսկ այն երկրներում (Անգլիա, Գերմանիա, Սկանդինավյան երկրներ, Չինաստան, Պակիստան և այլն), որտեղ այդ ամենը չենք արել, մեր ցավին ու ճակատագրին մնացել են անտարբեր, ավանդույթներ չեն ձևավորվել, բարեկամական կապեր չեն զարգացել:

Ֆրանսիայի գաղթավայրը, 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած, խոշոր դեր է կատարել հայ երիտասարդության ուսման և առաջադեմ գաղափարների զարգացման գործում: Արևմտահայ առաջադեմ գաղափարների կրողները ֆրանսիական բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած մարդիկ են եղել: «Ֆրանսահայ գաղթավայրերի աշխուժությունը նոր ժամանակներում զգալիորեն նպաստում է հայերի նկատմամբ ֆրանսիական իշխանությունների ցուցաբերած ուշադրությունը»¹:

Ֆրանսահայ գաղթօջախները նոր ժամանակներում հիմնովին փոխել են իրենց բնույթը: Եթե նախկինում գաղթավայրերի բնակչության հիմնական մասը կազմում էր վաճառականությունը, ապա նոր ժամանակներում դառնում են ուսման ծարավ երիտասարդությունն ու արհեստավորությունը: Եթե նախկինում հայ համայնքները ցրված էին և անկազմակերպ, ապա նոր ժամանակներում սկսում են կազմակերպվել: Եվ եթե անցյալում գաղթօջախներն առանձին ակտիվություն չեն ցուցաբերել հայ հասարակական կյանքում, ապա այժմ նրանք հանդես են գալիս հասարակական եռանդուն գործունեությամբ: Եվ փոքրիկ, աննշան թվացող ֆրանսահայ գաղթավայրը խոշոր դեր է կատարում հայ առաջադեմ մտքի ձևավորման գործում: Ֆրանսիայի հայ գաղթավայրը փաստորեն դեմոկրատական առաջադեմ գաղափարների ջահակիրն է դառնում հայ հասարակական կյանքում:

19-րդ դ. վաթսուներկու թվականներին ֆրանսահայ գաղթօջախներից խոշոր դեր է կատարել մանավանդ Փարիզը: Ֆրանսահայ մշակույթի, ինչպես և հայ պարբերական մամուլի պատմության բազմաթիվ հայ գործիչներ մեծ ավանդ ունեն հայ հոգևոր և մշակութային կյանքի ձևավորման գործում, սակայն դրանցից առավել մեծ ներդրում ունի Ստեփան Ոսկանը², որի նախածեռնությամբ և անձնական ջանքերով լույս տեսան «Արևելք» (1855-1856) և «Արևմուտք» (1859-1865) կիսամյա հանդեսները: «Այս հան-

¹ Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Ե., 1967, էջ 155:

² Ստեփան Ոսկանը ծնվել է Չմյուննիա քաղաքում 1875թ.: Նախնական կրթությունն ստացել է տեղի «Մեսրոպյան» վարժարանում, իսկ բարձրագույնը՝ Փարիզի Սորբոնի համալսարանում՝ հետևելով պատմափիլիսոփայական ճյուղին:

դեսները փաստորեն Արևմտյան Եվրոպայում լույս տեսած առաջին հայ առաջադիմական պարբերականներն են, որոնց մեջ անողոք քննադատության են ենթարկվում հայ կղերապահականողական ուղղության ներկայացուցիչները, բացահայտվում են նրանց հիմնական սխալները և պրոպագանդվում հայ առաջադեմ բուրժուադեմոկրատական գաղափարախոսությունը»¹:

Ստեփան Ոսկանն ամբողջ էությամբ նվիրվել է ինչպես հայ, այնպես էլ Ֆրանսիայի մշակութային, տնտեսական, քաղաքական իրողություններին և ակտիվ մասնակցություն է ունեցել Թյուլըրի պալատի գրավմանը. «Փետրվարյան ազատության առաջին որոտումը մեր վրայեն արևելյան գերության մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ականա սասպարեզի մեջ նետեց: Այո՛, Լուի Ֆիլիպի դեմ ապստամբներու հետ էինք, այո՛, ըրինք ազատության համար, ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռին Թյուլըրի պալատ մտնելու պատիվն ունեցանք»²:

Միքայել Նալբանդյանը հարգալից էր վերաբերում Ստեփան Ոսկանին և հիացմունքով խոսում նրա գործունեության մասին: Նա իր «Հիշատակարանի» մեջ գրում է. «Փարիզում է գտնվում քանքանավոր պ. Ստեփան Ոսկան ուսումնական ազգայինը, որ քանի մը ամիս սորանից առաջ հրատարակելով «Արևելք» անուն օրագիրը (խափանված է մի հայ ճիզվիթի դարանագործությամբ, ամոթ և խայտառակություն այդ սևահոգի անպիտանին) այժմ հրատարակում է «Արևմուտք» անունով կիսամսագիր»³:

Ստեփան Ոսկանը անողոքաբար քննադատում էր հայ կյանքում գոյություն ունեցող երևույթները և չէր զանազանում, թե նրանք ազգային բուրժուաներ են, թե հոգևորականներ կամ մշակութային գործիչներ, և այդ ամենն անում էր սրտի ցավով ու մեծ անհանգստությամբ, քանի որ մեր ներքին անհամաձայնություններն ի վերջո կհանգեցնեն հայ ազգի գոյությունն ընդհանրապես: «Մեր ազգին արտաքին թշնամիները բազմաթիվ և ահարկու են արդարև, այլ ներքին թշնամիներն ավելի վնաս կու տան և մեր էությանը ուղղակի կսպառնան հիմա, և եթե դարձան չի տարվի հայ անունը լիաջինջ պիտի բառնան երկրի երեսեն»⁴:

Բացի Ստեփան Ոսկանից, եղել են բազում այլ մտավորականներ, որոնք իրենց ամենօրյա գործունեությամբ աշխատել են հայապահպանության, հայի ճակատագրի, սեփական հայրենիքի ազատագրության, հայ մշակույթի պահպանության ու զարգացման, հայությանը մի դրոշի տակ համախմբման, ազգի ապագայի հարցերով: Եվ այս ամենով կարևորվում է մի հանգամանք, որ Ֆրանսիայի մտավորականությունը ճիշտ էր հասկանում հայության խնդիրը, և ինքն էլ էր անհանգստանում ու մեծ ջանքեր ներդնում, որպեսզի իրականություն դառնան հայի նպատակներն ու հարատևումը:

Դեռ Նապոլեոն Առաջինի շրջանից Ֆրանսիան ձգտում էր տիրանալ Եփրատից արևմուտք ընկած տարածքներին, ինչպես նաև Սիրիային: Իսկ Նապոլեոն III-ը օգտագործում էր կիլիկիահայությանը՝ լեռնաշխարհի խիզախ ժողովրդի ընդվզումները սուլթանի վրա ճնշում գործադրելու, Կիլիկիայում և Փոքր Հայքում հաստատվելու համար: «Փարիզը աջակցություն ցույց տվեց զեյթունցիների 1862 թ. ապստամբությանը: Որպեսզի ճիշտ պատկերացում կազմվի Ձեյթունի հայությանը Ֆրանսիայի ցուցաբերած օգնության մասին, բերենք հետևյալ օրինակը: Արևմտահայ ազատագրական շարժումը երկու առաջատար կենտրոններ է ունեցել՝ Սասունն ու Ձեյթունը: XIX դ. և XX դարասկզբին սասունցիներն ինքնապաշտպանական կռիվներ են մղել շուրջ 30, իսկ Ձեյթունը՝ 200 անգամ: Սասունցիների գրեթե բոլոր կռիվներին հաջորդել են ջարդեր, այդ թվում 1894 և 1904 թթ. զանգվածային կոտորածները, իսկ Ձեյթունում ոչ միայն զանգվածային, այլև ընդհանրապես կոտորածներ գրեթե տեղի չեն ունեցել: Պատճառը մեկն էր. զեյթունցիներին հովանավորում էր Ֆրանսիան»⁵:

¹ Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 161:

² «Արևմուտք», 1859, N 1, էջ 59

³ Կոմս Էմանուել, Հիշատակարան: Տե՛ս «Հյուսիսափայլ», 1859, էջ 745:

⁴ «Արևմուտք», 1859, N 1, էջ 13:

⁵ Պողոսյան Ս., Հարևաններ մոտ ու հեռու, գ. 3, Ե. 2012, էջ 421:

Բացի պետական վերաբերմունքից կային նաև բազմաթիվ ֆրանսիացի մտավորականներ, որոնք անտարբեր չէին հայի ճակատագրի հանդեպ և հաճախ իրենց ծայրն էին բարձրացնում Հայաստանում կատարվող ողբերգական իրադարձությունների դեմ:

Կ. Պոլսում ֆրանսիայի դեսպան Կամբոնը 1895 թ. հայկական բարենորոգումների ծախսողման մասին իր կառավարությանը գրում է. «Սուլթանը մտադիր չէ իր խոստումները կատարել, որովհետև համոզված չէ, որ Եվրոպան համերաշխ է... հայկական գործը ձգձգվում է, որովհետև սուլթանն այդ հարցում եվրոպական միջամտությանը չի հավատում»¹:

Այդ նույն միտքն է արտահայտել Գաբրիել Լազյանը իր «Հայաստանը և հայ դատը» աշխատությունում. «Համոզված եմ, որ եթե լորդ Սուլթերին և մանավանդ իշխան Լոբանովը (Ռուսաստանի արտգործնախարարը) իրենց դեսպաններին ազատ թողնեին գործելու, կհաջողեցնեինք սուլթանին հարկադրել իրականացնելու բավարար բարենորոգումներ»²:

1896 թ. թուրքական պետության և անձամբ սուլթան Աբդուլ Համիդի ղեկավարությամբ իրագործվող ջարդերի հենց սկզբից ֆրանսիական պետական գործիչ, Ֆրանսիայի արտգործնախարար Հանսթոն հրավիրեց Փարիզում թուրքական դեսպանին ու սպառնաց, որ եթե հայերի ջարդն անմիջապես չդադարեցվի. «... անկախ մյուս պետությունների կարծիքից՝ ռմբակոծելու է Կ. Պոլիսը և բնաջնջելու է քաղաքի թուրքական թաղամասերը... քանի որ Հայաստանում բարենորոգումները դեռևս անցկացված չեն, այդ պատճառով Բ. Դեան վրա է ընկնում Հայաստանում և այլուր թափված արյան ամբողջ պատասխանատվությունը»³:

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Ֆրանսիայում հայերի ճակատագիրը մտահոգիչ էր, և պետական, մշակութային գործիչներն ու ազգային ժողովի պատգամավորները յուրաքանչյուր պատեհ առիթով ելույթներ էին ունենում և սուր քննադատության ենթարկում պետական գործիչներին Հայաստանին ռեալ օգնություն չկազմակերպելու և սուլթանի արյունոտ ձեռքը չբռնելու համար: Այս համատեքստում էական էր ժողով Կլեմանսոյի⁴ օրինակը. նա շատ անգիջում էր, երբ իր մտահոգություններն արտահայտում էր խոսքով, իսկ երբ անհրաժեշտ էր կոնկրետ գործողություններ, նա ևս շատերի նման առաջնորդվում էր իր ազգի ու պետության շահերով: Այդ մասին շատ դիպուկ է արտահայտվել հայ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը: 1920 թ. մարտի 8-ին նա գրում է. «Ամբողջ 16 ամիս շոյեցին հաղթական պետությունները թյուրքին, և այնպիսի մարդիկ, ինչպես Կլեմանսո, որ առաջ գրել էր ու պաշտպանել հայերին, բողոքել ու կատաղել, բայց երբ պիտի վճռեր, շահը կուրացրեց իր խիղճը և ծախեց իր հոգին: Այդպես բոլորը»⁵:

Մենք պետք է մեր երախտագիտության խոսքն ասենք այն բոլոր ֆրանսիացիների մասին, որոնք ջանք չէին խնայում հայության ծանր դրության մասին արտահայտվել ի լուր աշխարհի: «Ֆրանսիայի առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչները միշտ էլ հանդես են եկել հայ ժողովրդի արդար դատի պաշտպանությամբ, իրենց բողոքի ծայրը բարձրացնել արևմտահայության դեմ կիրառած անլուր հալածանքների ու բռնության դեմ»⁶:

Եվ անկախ այս ամենից՝ հայության վիճակը այս ազնիվ հոգիների աղմուկից ու քննադատություններից այն կողմ չէր անցնում. կապիտալի օրենքներն այլ են, և այս ամենն ի նկատի ունեն հայրենասեր բանաստեղծը, որ գրում էր. «...Աշխարհը՝ քար,

¹ Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 182:

² Լազյան Գ., Հայաստանը և հայ դատը, Ե., 1991, էջ 89:

³ Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 422:

⁴ Ֆրանսիացի պետական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, բժշկության դոկտոր Ֆրանսիայի ակադեմիայի անդամ: 1906-09, 1919-20 թթ. Ֆրանսիայի վարչապետ, 1919-1920 թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսի նախագահ: Հակառակորդների հանդեպ անգիջում բնավորության համար ստացել է «Վագր» մականունը:

⁵ Իսահակյան Ավ., Հիշատակարան, Ե., 1977, էջ 343: Նկատի ունի Սևրում ընթացող բանակցությունները:

⁶ Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Եղեռնի դատապարտման հարցը և ֆրանսիական հասարակայնությունը, Ե., 1990, էջ 164-169:

մարդիկ՝ օտար, թուրքերը՝ զազան, մանկամորթ, Եվրոպան շահամուլ... իսկ հայերը հավիտենական գոհեր... Եվ Աստված էլ չկա, միայն սատանան է, որ իշխում է...

Ինչպե՞ս դիմանալ – հայը տիեզերքից մեծ սիրտ պիտի ունենա, որ կարողանա տիեզերքի չափ այս ցավերին դիմանա... Բարեկամների կողմից եկած անարդարությունները տանի և վատությունները հանդուրժե՞¹: Այնուհետև մեծ բանաստեղծը շարունակում է և ինքն իրեն հույս տալիս. «Հայ ազգը չի մեռնի, նա պիտի ապրի, ապրի ձեր բոլոր գերեզմանների վրա, նոր, ազատ կյանքով»²:

Եվ չնայած այս ամենին՝ փախստական հայը, Ֆրանսիա գալով գոնե ապահովում էր իր կյանքի անվտանգությունն ու հանապազօրյա հացի վաստակումը: Եվ արդյունքում Ֆրանսիայում հայկական գաղթօջախներում երեսունական թվականների վերջերին հայ բնակչությունը հասավ 70 հազարի³:

Շարունակելի

Самсон Карян, Отрывки из истории армяно-французских отношений. -В статье подчеркнута внимание и беспокойство французских дипломатов, государственных и политических деятелей, деятелей культуры и науки по поводу справедливого решения армянского вопроса.

Ключевые слова: Франция, колония, культура, интеллигенция, Армянский вопрос.

Samson Karyan, Episodes from the history of Armenian-french relationship. -In the article a special attention is paid on the considerate manner of the state, political, diplomatic, educational and cultural figures on the fair solution of Armenian cause.

Key words: France, colony, culture, intelligentsia, Armenian cause.

¹ Իսահակյան Ավ., նշվ. աշխ., էջ 319-320:

² Նույն տեղում, էջ 346:

³ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 178, գ. 393, թ. 20ա: